ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3326-Ա «20» օգոստոսի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ԱՐՄԵՆԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2025 թվականի օգոստոսի 4-ի N 370 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի օգոստոսի 15-ի հ. 44688-25 գրությունը՝

1. Հասմիկ Արմենի Օհանյանին՝ 2025 թվականի օգոստոսի 21-ից, մեկ տարի փորձաշրջանով՝ նշանակել «Երևանի Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2030 թվականի օգոստոսի 21-ը ներառյալ:

2. «Երևանի Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Անահիտ Խաչատրյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

3. «Երևանի Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հասմիկ Օհանյանի փորձաշրջանի ղեկավար

նշանակել «Երևանի հ.187 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Հարությունյանին:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ